

**FOREIGN LANGUAGES
FOR SPECIAL PURPOSES**

№ 5

YEREVAN STATE UNIVERSITY PRESS

YEREVAN 2005

**ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԸ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

№ 5

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ 2005

Recommended by the Scientific Council of the Department of Romance and Germanic Philology, Yerevan State University, Republic of Armenia

Editor-in-chief: **Margarita Apresyan**

Head of ESP Chair N 1, Ph.D. in Linguistics, associate professor, YSU, RA.

Honourable members **Gevorg Djahukian**

of the editorial board: Academician, Armenian National Academy of Sciences.

Dora Sakayan

Doctor of Philology, Professor, McGill University, Canada.

Hans Sauer

Doctor of Philology, Institute of English Philology, Munich University, Germany

Editorial board: **Karo Karapetian**

Dean of the Department of Romance and Germanic Philology, Ph.D. in Pedagogics, associate professor, YSU, RA.

Samvel Abrahamyan

Vice-dean of the Department of Romance and Germanic Philology, Ph.D. in History, associate professor, YSU, RA.

Svetlana Vardanyan

Associate professor at the Department of English Philology, Ph.D. in Linguistics, YSU, RA.

Foreign Languages for Special Purposes. Yerevan.
Yerevan State University Press, 2005, 176 p.

FLSP international journal, published once a year, is a collection of scientific articles presented by FLSP practitioners inside and out Armenia targeting at professional experience exchange and concurrent development of FLSP methodologies.

For submission guidelines contact

E-mail: english@ysu.am, apresyanm@yahoo.com.

Apresyan, M. and others, 2005

ՀՏԴ 802/809

ԳՄԴ 81.2

0-780

**Երաշխավորված է Երևանի Պետական համալսարանի
ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի խորհրդի կողմից**

Գլխավոր խմբագիր՝

Մարգարիտա Մ. Ապրեսյան

ԵՊՀ անգլերեն լեզվի թիվ 1 ամբիոնի վարիչ,
բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր

Խմբագրական խորհրդի
պատվավոր անդամներ՝

Պետրոս Բ. Զահուկյան

ՀՀ ԱԳԱ ակադեմիկոս

Դորա Գ. Սահյան

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մթգիլ համալսարան, Մոնրեալ, Կանադա

Հանս Սաուեր

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Անգլիական բանասիրության ինստիտուտ
Մյունխենի համալսարան

Խմբագրական խորհուրդ՝

Կարո Կարապետյան

ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության
ֆակուլտետի դեկան, մանկավարժական
գիտությունների թեկնածու, դոցենտ

Սամվել Աբրահամյան

ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության
ֆակուլտետի դեկանի տեղակալ, պատմական
գիտությունների թեկնածու, դոցենտ

Սվետլանա Վարդանյան

Անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ,
բանասիրական գիտությունների թեկնածու

0-780

Օտար լեզուները մասնագիտական նպատակների համար, Եր.
Երևանի համալս. հրատ., 2005, 176 էջ:

Գիտական հոդվածների սույն միջազգային ժողովածուն նպատակ ունի հավաքելու և ներկայացնելու Հայաստանի և Հայաստանից դուրս «Օտար լեզուները մասնագիտական նպատակների համար» /FLSP/ մասնագետների մշակված ժամանակակից մեթոդները՝ փորձի փոխանակման և դրանց հետագա զարգացման նպատակով:

0 50 02 000000 2005
704(02)-2005

ԳՄԴ 81.2

ISBN 5-8084-0445-2

© Ապրեսյան Մ. և ուրիշ., 2005

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Admoni W., Der deutsche Sprachbau, Leningrad, 1972, S.164.
2. Brinkmann H., Die Deutsche Sprache, Pädagogischer Verlag Schwann, Düsseldorf 1924, Seite 75.
3. Gallman Peter, Kategoriell komplexe Wortformen, Tübingen: Niemayer 1990, S.162.
4. Roger Sauter, Der Genitivschwund im verbalen Bereich, Marcel Vuillaume (Hrsg.) Die Kasus im Deutsche, Tübingen. 1998.
5. Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատոր III, Երևան, 1957, էջ 334:
6. Գ. Բ. Չահուկյան, Универсальная теория языка. Москва, 1999, էջ 133:

ABSTRACT

The German Language has been exposed to different changes during its history. One of the most actual problems of language is the danger of allimation of genitive case. Still, there were more than 300 verbs in German requiring compliment in genitive case in the Middle Ages.

Yet, nowadays, their number has decreased from 5 to 8 verbs. There exists an assumption that the genitive case will vanish not only from the verbal group but also from the nominal one.

Մպորտային ռեպորտաժի ոճական և կառուցվածքային որոշ առանձնահատկություններ

Ռեպորտաժը տեղեկատվական ժանր է, որ իրադարձությունները ներկայացնում է օպերատիվ, հանգամանալից կերպով և իր մեջ է ներառում լրատվության ամենատարբեր ձևերը երևույթների մատուցման տարակերպ սկզբունքներով (զրույցներ, նկարագրություն, հաշվետվություն և այլն):

Տեսաբանները միասնական չեն ռեպորտաժի ժանրը ձևակերպելու, դրա սահմանները հստակեցնելու առումով: Ոմանք ենթադրում են, որ այն կենդանի, պատկերավոր ձևով մատուցվող տեղեկատվություն է (Жапыр, 1959, 24), մյուսները համոզված են, որ այն խստորեն մոտենում է թղթակցությանը և կամ նույնիսկ պատկանում է արվեստի ոլորտին: Ակնհայտ է, որ նման հարցադրումը խստորեն ընդլայնում է ժանրի սահմանները (Навозов, 1959, 27): Այս պարագայում իրավամբ կարևորվում է ոչ միայն ընթերցողին ներկայացվող նոր և անսպասելի տեղեկությունը, որքան դրա հանդեպ դրսևորվող հեղինակային տեսանկյունը, փաստերը համադրելու, անհրաժեշտ եզրահանգման գալու նրա հմտությունը: Այս առումով ռեպորտաժն անհատական բնույթ ունի և դրանով իսկ յուրահատուկ է իր լեզվաոճական նրբություններով:

Մեզ համար կարևորվում է ոչ այնքան ռեպորտաժի ժանրի սահմանները ճշգրտելու խնդիրը, որքան դրա ժանրային բազմակերպության, պատկերավորման միջոցների առանձնահատկությունների բացահայտումը:

Ռեպորտաժի բնույթի, դրա յուրահատկությունների բացահայտման համար առաջնահերթ նշանակություն ունի ժանրի ոճական դրսևորումների ուսումնասիրությունը:

Լեզվի ուսումնասիրության այս մակարդակում ոճաբանական վերլուծությունը ընդգրկում է «մտքի բառային արտահայտություն»

նը» (Շ. Բալլի), այսինքն՝ խոսքը: Այս պարագայում առավելապես կարևորվում է ոճական արժեք ունեցող միավորների բացահայտումն ու վերլուծությունը:

Եթե քերականության համար ելակետը ձևն է, ապա ոճաբանության համար՝ բովանդակությունը, կիրառական տարբերությունը:

Սպորտային ռեպորտաժի ուսումնասիրության այս մակարդակում դրսևորվում են ոչ միայն կառուցվածքային ու ընդհանուր առմամբ խոսքի արտահայտման, այլև հոգեբանական կարգի յուրահատկություններ, որոնք սերտորեն առնչվում են դրա բովանդակությանը և իրականում պայմանավորում են այն առանձնահատկությունները, որոնք բնորոշ են այս ժանրին:

Վերնագիրը ռեպորտաժում: Ժանրի կառույցի տեսակետից կարևոր է վերնագրի հարցը: Դրանք առանձնահատուկ նշանակություն ունեն ընթերցող-հանդիսատեսի ուշադրությունը ամենակարևորի վրա բեռեցնելու, հարցադրումները նոր տեսանկյունով ներկայացնելու կամ պարզապես հեղինակային վերաբերմունքն անմիջականորեն արտահայտելու համար: Ուսումնասիրած ամենատարբեր բնույթի ռեպորտաժների վերնագրերը բաժանել ենք երկու հիմնական խմբերի՝ տեղեկատվական և գնահատողական:

Առաջին տիպին պատկանող վերնագրերը հաճախ ուղղակի գործնական բնույթ են կրում՝ դրանք գերազանցապես արտահայտվում են բառակապակցությունների, անվանական նախադասությունների միջոցով, որոնք ընդհանուր պատկերացում են տալիս ռեպորտաժի բովանդակության վերաբերյալ. "The opening of the season", "The first start of the Olympics", "The life of the Olympic town", "The end of season".

Գնահատողական տիպի վերնագրերն առավել հարուստ են և սովորաբար արտահայտվում են ամբողջական նախադասությունների միջոցով, այն կառույցով կարող է լինել ինչպես պարզ, այնպես էլ բարդ:

"It was not a usual match", "It is pleasure to meet friends".

"It is impossible without chaos", "The referees have new problems".

"How to explain the paradox we always have ?".

Նման ձևակերպումները ամենատարբեր մտային և հուզական նրբերանգներ են բացահայտում տեղեկատվության մեջ. "The champion's luck came true as in a tale", "In the Russian league

championship. From victory to catastrophe", "The Brazilian fanatics seemed to be in half heart attack", "I don't think that tomorrow we will be in the league", "The great is always seen from far away".

Հաճախ վերնագրերը կազմվում են զուտ սպորտային տերմինների միջոցով, որոնք հասկանալի են հասարակության լայն շերտերին. "We are ready to accept the sporting tournament", "Everybody is eager to reach the finish", "Knock down is not the end yet", "And so the start", "Here is the finish".

Վերնագրում կարող են ամփոփվել մրցելույթների արդյունքները. "Plentiness of gold medals", "Medals in all the continents", մարզիկների վերաբերմունքը, նրանց ցանկությունները. "We expected more", "We will still meet", "More could have been done", հաղթանակի հասնելու ներքին պատճառները. "Mastery and will win", "Victory doesn't like cowards":

Սեկ այլ դեպքում դրանք կարող են ընդհանուր և միանգամայն ընկալելի տրամադրությունը փոխանցել մարդկանց. «Victory! Hear is our dream», "We all are Olimpians":

Չի կարելի անտեսել և այն հանգամանքը, որ վերնագրերն ակնհայտորեն գովազդային նշանակություն ունեն, և դա էլ հարկադրում է, որ խոսքը լինի կարճ, բովանդակալից, անսովոր, դիմամիկ:

Նախերգը ռեպորտաժում: Ժանրի կառուցվածքի տեսանկյունից պակաս կարևորություն չի ներկայացնում նախերգը: Այստեղ կարող է վերնագրում եղած գաղափարն ավելի ընդարձակվել, մանրամասնվել, նաև հուշել ասելիքում եղած կարևորագույն հարցադրումների մասին: Դրանք հաճախ հիշեցնում են առանձին ենթավերնագրեր, որոնք ընդգրկում են հարցադրումների որոշակի շրջանակ, բայց ի տարբերություն գեղարվեստական ոճում ի հայտ եկող ենթավերնագրերի՝ այս նախերգերը ներքին իմաստով ու նաև տրամադրությամբ ավելի սերտորեն են կապակցված: Դրանք կարելի է ասել, ոչ միայն խնդիրների կամ հարցադրումների կտրուկ փոփոխությունների, այլ նաև տրամադրության փոփոխություններ են, որոնք նախապես ուղղորդում են ընթերցողին, ազդակ են հանդիսանում նրա երևակայության բորբոքման համար:

Ահա ինչպիսին են "To look forward to tomorrow" խորագրի տակ նախերգի ձևակերպումները: Դրանք ամեն անգամ նոր պարբերության սկիզբն հիշեցնող արտահայտություններ են, որոնք բա-

ցահայտում են ինչպես հեղինակային «ես»-ը, այնպես էլ ընտրովի կարգով հաղորդում են հեղինակի կողմից արդեն իմաստավորված տեղեկատվությունը.

“Match for memory”, “Only these players and not others”, “There is not any game without mistakes”, “The audience is the best judge”, “It may be a standard”, “The referees’ new problems”, “For the favour of the coach”.

Ինչպես նկատելի է, նախերգն առանձին նախադասություններով ամբողջական պատկերացում է տալիս հարցադրումներին՝ առանձին-առանձին: Դրանք վերաբերում են ֆուտբոլային խաղին ընդհանրապես, որոշակի հանդիպումից անցում է կատարվում այն խնդիրներին, որ կապված են թիմի կազմի հետ, ինչը ձեռք է բերվել տարիների քրտնաջան աշխատանքով, բայց և չի կարելի դուրսից տեսնել, տևական աշխատանքի հետ միասին հարկ է վերակառուցել խաղաոճը, խաղամակարդակը, այն ամենը, ինչը խանգարում է լավ խաղին: Մեկ անգամ ևս ընդգծվում է հանդիսատեսի դերը, և՛ մարզիչները, և՛ մարզիկները գտնվում են բազմաազար հանդիսատեսի ուշադիր ու պահանջկոտ հայացքի ներքո, հետևապես և միայն արդյունքում առաջ գնալը քիչ է, հարկ է գրագետ և գեղեցիկ խաղ ցուցադրել: Նոր, դինամիկ, բարձր կարգի մրցավարը նոր խնդիրներ է առաջադրում մյուս մրցավարներին, որոնք հարկադրված են արագ և ճիշտ որոշումներ կայացնել: Խաղի ողջ սցենարը, յուրաքանչյուր խաղացողի դերը որոշում և կարգավորում է մարզիչը ամեն անգամ նոր և ամեն անգամ անկանխատեսելի իրադրության պայմաններում: Եվ եթե ինչ-որ բան այնպես չի իրականացվում, ապա դրա պատճառները կարող են բազմաթիվ լինել: Նպատակն իրականացնում է թիմի ամեն մի անդամը, հանդիսատեսը, տրամադրությունը, կամքը, դատավորը... հետևապես մարզիչին պետք չէ թողնել մենակ ու անպաշտպան:

Ակնհայտ է, որ նախերգում առանձնացված նախադասությունները ներքին իմաստով միասնական են, թեև դրանք արտաքուստ նման են «հեռագրային» ոճին:

Հաճախ նախերգը տարբեր նախադասությունների համադրումներով կարող է և առնչվել անցյալի դեպքերին, որոնք նախապատրաստել են այսօրվա իրադարձությունը: Այս դեպքում նախերգի նախադասությունները զուտ տեղեկատվական բնույթ են ստանում: “He invites and conquers «Valencia»” վերնագրի տակ է ընդգրկված

նախերգը, որը տեղեկությունն ուղարկելու, հաղորդելու նպատակ ունի.

“The 19th of September. The beginning of the match.

The teams with the same players.

All the tickets are consumed.

The stadium is in a wonderful state”.

(Uefa direct, 8.04,p.14).

Վերջամասը ռեպորտաժում: Վերջապես այս ժանրի լեզվաոճական կառույցում կարևոր տեղ է գրավում և ռեպորտաժի վերջամասը: Այն ուղղակիորեն ամբողջացնում, ուժեղացնում, առավել նկատելի է դարձնում վերնագրում առաջադրված գաղափարը, բայց այս անգամ արդեն հիմնավոր ու ավելի իմաստավորված:

“With tomorrow’s expectation” խորագրի ներքո խոսելով աշխատանքների և հասարակության ակնկալիքների մասին՝ լրագրողը խոսքն ավարտում է հետևյալ կերպ. “The realization of the problems directed to the football development of tomorrow (The complex approach is polygon). It is impossible without moving forward, without the wish of expecting tomorrow”.

(Uefa direct, 5.04, p. 17).

Հարկ է նկատի ունենալ, որ վերջամասը այս ժանրի համար կատարում է յուրօրինակ շրջանակի դեր: Բացահայտորեն ի հայտ է գալիս հեղինակային «ես»-ը, որն ամբողջական շրջանի մեջ է առնում ռեպորտաժը, սրա միջոցով ի մի է բերվում ասելիքի սկիզբն ու վերջը: Այն դեպքերը դարձնում է ավելի արժանահավատ ու տպավորիչ, բացի այդ ժամանակային առումով ռեպորտաժը, եթե անգամ ամենատարբեր իրադարձություններ է ընդգրկում, միևնույն է, վերջամասի շնորհիվ «տեղավորվում» է մեկ ամբողջական ժամանակային դաշտում: Այս դեպքում մեկնաբանության թողած ազդեցությունն առավել տևական է, խոսքը ստանում է մի նոր տոնայնություն: Այն կարող է միանգամայն տարբեր տրամադրություն կամ գաղափար հաղորդել այն ամենին, ինչն արդեն ասվել է.

“The colleagues meet in order to find that invisible bunch which unites and brings together people’s hopes, and later they become the base on which rises the confidence”.

(EPC News,Noll,July 2002, p.9).

"The Word Championship is over. It went back to history. But new voices from different parts of the world will be still heard about the victories and defeats".

(*WORLD CUP-2002, p. 3*).

"Millions of people all over the world admired his play who were watching the Spanish Championship. But he didn't feel happy scoring hat-trick with the match against the opposite national team. But according to his promise he could do more for his team than those three goals".

(*CHAMPIONS, August/September 2004, p.22*).

Խոսքի նպատակադիր կառուցման առանձին բաղադրիչների (վերնագիր, նախերգ, հեղինակային շեղումներ, վերջամաս) միջոցով ժանրը դառնում է կառուցվածքի առումով և՛ հավաք, և՛ ընդգրկուն:

Այսպիսով՝ ռեպորտաժի երկու հիմնական տեսակները (տեղեկատվական և գեղարվեստական) զուտ կառուցվածքային առումով կարող են գրեթե նույնը լինել, բայց դրանք տարբեր են իրենց բովանդակությամբ, հարցերը մեկնաբանելու խորքով ու ընդգրկումով: Այս երկրորդ տեսակի դեպքում կարելի է ասել, որ լրագրողն ընթերցողի հետ վարում է լուրջ խոսակցություն, այստեղ տեղեկությունը հաղորդելուն զուգընթաց, թերևս դրանից ավելի կարևորվում է երևույթների պատճառահետևանքային կապերի բացահայտումը: Ժանրի սահմանների ընդարձակումը, վերլուծական հնարավորությունների խորացումը, ներգործման նորանոր, ինքնատիպ միջոցների հայտնաբերումը, ռեպորտաժն ընդհուպ մոտեցնում է գրական-հրապարակախոսական ժանրերին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Жанры советской газеты, М., 1959.-270с.
2. Навозов А. Поговорим о репортаже, М., 1959, №6.
3. Балли Ш.. Французская стилистика, М., 1961.-394 с.
4. Барашев П. Полстроки о репортаже// Свидетельствует репортер, М., 1985.
5. Баталов Т. Виды и средства коммуникации в стилевом расслоении литературного языка // Прагматика и стилистика. Вып. 245, М., 1985.
6. Бекасов Д. Корреспонденция, статья – жанры публицистики, М., 1972. – 76 с.
7. Солганик Г. Я. Стиль репртажа, М., 1970. – 75 с.
8. Солганик Г. Я. Язык и стиль передовой статьи, М., 1973. – 75 с.
9. Uefa direct, 8.04, p. 14.
10. Uefa direct, 5.04, p. 17.
11. EPC News, №11, July 2002, p. 9.
12. WORLD CUP – 2002, p. 3
13. CHAMPIONS, August/September 2004, p. 22.

ABSTRACT

The article highlights some structural and stylistic peculiarities of a sports reporting as a manifestation of a special genre within the publicistic style.